ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» հունվար 2021 թ. N 5-Ա/1

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1878-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարողին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում կազմակերպության կանոնադրությունը սահմանված ժամկետում ներկայացնել պետական գրանցման:

3. Սույն հրամանի 2-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարին:

1/15/2021

X

ՄԵՍՐՈՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Signed by: ARAKELYAN MESROP 3304850198

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2021 թվականի 18 հունվարի -ի
թիվ 3-Ա/1 հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող կազմակերպություն է: Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 29.210.02204) և «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 29.210.01937) միաձուլման ձևով վերակազմակերպման միջոցով և վերջիններիս իրավահաջորդն է:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը ստեղծված է համայնքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադրի պարտականությունների համար:

7. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ, բանկերում Հայաստանի Հանրապետության արժույթով ու արտարժույթով:

9. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները հաշվարկում և վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափերով:

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Գյումրի, Անանիա Շիրակացու 10:

11. Կազմակերպության անվանումն է՝ «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Ռուսերեն՝ «Ширакский центр поддержки ребенка и семьи» Государственная некоммерческая организация

Անգլերեն՝ “Child and Family Support Center of Shirak Marz” State Non-Commercial Organization.

II. Կազմակերպության գործունեության բնութագիրը, առարկան և նպատակը

12. Կազմակերպության գործունեության նպատակն է.

1) իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքը,

2) կազմակերպել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաների առավելագույնը 1 տարի ժամկետով ցերեկային աջակցության ծառայությունները,
3) նպաստել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (ընտանիքի) հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարմանը,
4) խթանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (ընտանիքի) ներուժի և կարողությունների բացահայտումը, ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը,
5) ստեղծել պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ներառումը հասարակություն ապահովելու համար, օժանդակել նրա սոցիալ-մանկավարժահոգեբանական և առողջական խնդիրների լուծմանը,
6) կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակը և սոցիալական մեկուսացումը,
7) շուրջօրյա խնամքի ծառայությունների վեցամսյա ժամկետը լրանալուց հետո, ելնելով երեխայի լավագույն շահից, ներկայացնել մասնագիտական եզրակացություն երեխայի հետագա խնամքի ձևը սահմանելու վերաբերյալ:

13. Կազմակերպության գործունեության առարկան է.

1) Մինչև 18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի անդամների հետ սոցիալական աջակցության և երեխայի շուրջօրյա խնամքի աշխատանքների իրականացումը:
2) Մինչև 18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային և նրա ընտանիքին ցերեկային կանխարգելիչ աջակցության ծառայությունների տրամադրումը:
3) Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը:
4) Նյութական և կենցաղային պահանջների բավարարումը:
5) Կրթական գործընթացում երեխաներին աջակցելը և առաջին բժշկական օգնության տրամադրումը, խնամքի ապահովումը մինչև երեխային՝ ծնողին վերադարձնելը, կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ խնամատար նշանակելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հետագա խնամքը համապատասխան հաստատությունում կազմակերպելը:
6) Մինչև 18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի անդամների մանկավարժահոգեբանական առանձնահատկությունների և սոցիալական կարիքների գնահատումը, աջակցության անհատական ծրագրի կազմումը և դրան համապատասխան ծառայությունների տրամադրումը:

7) Ճգնաժամային իրավիճակներում հայտնված երեխաների, երեխայի ծնողների /խնամքն իրականացնող անձի հետ/ անհապաղ տեղավորումը՝ 24-ժամյա աշխատանքային ռեժիմով:

14. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, հաշմանդամություն, հոգեֆիզիկական և մտավոր զարգացման դժվարություններ ունեցող, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորող, սոցիալապես անապահով, անօթևան, կոնֆլիկտային կամ արտակարգ իրավիճակներում հայտնված ընտանիքների մինչև 18 տարեկան երեխաների, ինչպես նաև նրանց ծնողների /խնամքն իրականացնող անձի/ ընդունելությունը և տեղավորումը՝ 24-ժամյա աշխատանքային ռեժիմով:
2) Կազմակերպում է մինչև 18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (մինչև 6 ամիս) և երեխայի հետ ծնողների /խնամքն իրականացնող անձի/ (մինչև 1 ամիս) շուրջօրյա ժամանակավոր որակյալ խնամքը՝ կարիքին համապատասխան:
3) Տրամադրում է ցերեկային աջակցություն 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ սոցիալ-հոգեբանամանկավարժական, թերապևտիկ, իրավախորհրդատվական, առաջին բժշկական օգնության, սննդի և այլ անհրաժեշտ ծառայությունների տեսքով:
4) Լիազոր պետական մարմնի հետ համաձայնեցնելով՝ ստեղծում է բազմամասնագիտական թիմ՝ ընդգրկելով նաև սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակցին՝ երեխայի /ընտանիքի/ հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների և սոցիալական կարիքների բազմակողմանի և խորը գնահատում իրականացնելու նպատակով:
5) Համաձայն դեպք վարող բազմամասնագիտական թիմի գնահատման արդյունքների՝ մշակում է երեխայի աջակցության անհատական ծրագիր՝ ուղղված երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքին, որը լրամշակվում է եռամսյակային կտրվածքով:
6) Լիազոր պետական մարմնի հետ համաձայնեցնելով՝ ստեղծված բազմամասնագիտական թիմը սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակցի մասնակցությամբ իրականացնում է երեխայի /ընտանիքի/ հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների, առողջական վիճակի և սոցիալական կարիքների գնահատում՝ երեխային

ընտանիք վերադարձնելու նպատակով աջակցություն տրամադրելու, իսկ անհնարինության դեպքում՝ նրա հետագա խնամքը այլընտրանքային տարբերակով կազմակերպելու համար:

7) Խնամակալության և հոգաբարձության մարմինների, ընտանիքի, կանանց, երեխաների պաշտպանության բաժինների, սոցիալական աջակցության տարածքային մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական թիմի հետ քննարկում է երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ ընտանիքից առանձնացնելու խնդիրները, ինչպես նաև ընտանիքին աջակցելու ուղիները:
8) Անհրաժեշտության դեպքում, հիմնված առողջական վիճակի գնահատման վրա, երեխայի և ընտանիքի անդամների ֆիզիկական և հոգեկան առողջության բարելավման նպատակով կազմակերպում է բժշկական ծառայությունների՝ ներառյալ վիրահատական միջամտությունների իրականացումը:
9) Կազմակերպում է երեխայի կրթությունը նախադպրոցական, հանրակրթական կամ միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև նպաստում է երեխայի՝ հնարավոր բարձրագույն կրթությանը նախապատրաստվելուն:
10) Նպաստում է երեխայի՝ հաստատությունից դուրս սոցիալ-մշակութային միջոցառումների մասնակցությանը՝ ուղղված նրա սոցիալականացմանն ու ներառմանը հասարակությունում:
11) Կազմակերպում է երեխայի կենցաղային սպասարկումը, ապահովում է նրանց համապատասխան խմբասենյակներով, անկողնային պարագաներով, հագուստով և կոշկեղենով:
12) Ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով երեխայի տարիքից և առողջական վիճակից:
13) Համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող տեղական ինքնակառավարման, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:
14) Ապահովում է սանիհիգիենիկ, հակահամաճարակային պաշտպանության միջոցառումների իրականացումը,
15) Կազմակերպում է մասնագիտական խորհրդատվական աշխատանքներ՝ ուղղված աշխատակազմի գիտելիքների, կարողությունների և որակավորման բարձրացմանը:

16) Պահպանում է երեխայի սեփականությունը հանդիսացող գույքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
17) Իրականացնում է անհատական և խմբային աշխատանքներ երեխայի ընտանիքի անդամների հետ՝ ծնողավարման և կենցաղավարման հմտությունների զարգացման ուղղությամբ, կազմակերպում է մասնագիտական խորհրդատվական աշխատանքներ և անհրաժեշտ ուղղորդումներ:
18) Բացառիկ դեպքերում լիազոր մարմնի թույլտվությամբ իրականացնում է երեխայի /խնամքն իրականացնող անձի/ շուրջօրյա խնամքի ժամկետի երկարաձգում՝ ելնելով անհրաժեշտությունից՝ միաժամանակ ներկայացնելով հիմնավորում աշխատանքների ընթացքի և ակնկալվող արդյունքների մասին:
19) Լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը, ներքին կարգապահական և այլ կանոնները:

III. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը

15. Կազմակերպությունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

16. Կազմակերպությունը չի կարող ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր:

IV. Կազմակերպության կառավարումը

17. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

18.Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմինը): Լիազորված պետական մարմինը՝

1) ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,
2) հաստատում է կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի ներկայացմամբ հաստատում է կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը, ինչպես նաև համաձայնություն է տալիս կազմակերպության տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածուների վերաբերյալ,

4) իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն,
5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
6) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում կազմակերպության տարեկան հաշվետությունները և տարեկան հաշվեկշիռը,
7) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,
8) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս կազմակերպության գույքը օգտագործման կամ վարձակալության հանձնելու համար,
9) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

20. Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

21. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

22. Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր պայմաններ, ինչպես նաև այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

23. Տնօրենը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազոր պետական մարմնի որոշումների, սույն

կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

25. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և /կամ/ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

26. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,
3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
5) նախքան պաշտոնի նշանակելը՝ լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնում է կազմակերպության տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածությունները,
6) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան) բացում է հաշվարկային հաշիվներ,
7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

10) սահմանված կարգով պաշտոնի նշանակվելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության հնգամյա ծրագիրը,
11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,
12) ըստ անհրաժեշտության իրականացնում է ծառայողական քննություն
13) հանդիսանում է շուրջօրյա խնամք ստացող երեխայի օրինական ներկայացուցիչը,
14) իր հայեցողությամբ, ելնելով երեխայի լավագույն շահից, շահառուի՝ կենտրոնում գտնվելու ընթացքում ծնողին թույլ է տալիս տեսակցել երեխային կամ դուրս բերել կենտրոնից որոշակի ժամանակահատվածով՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

27. Տնօրենի բացակայության ժամանակ, տնօրենի լիազորություններն իրականացնում է պետական լիազորված մարմնի գրավոր որոշման համաձայն նշանակված այլ անձ:

28. Կազմակերպության աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

V. Կազմակերպության սեփականությունը

29. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

30. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, նվիրաբերումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

31. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

32. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

33. Կազմակերպության սեփականության պահպանման, ինչպես նաև օգտագործման իրավունքով իրեն հանձնված պետական սեփականության պահպանության հոգսը կրում է կազմակերպությունը:

34. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

VI. Կազմակերպության ամրացված գույքը

35. Հիմնադրի որոշումով կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

36. Հիմնադիրն իրավունք ունի իր հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

37. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

38. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VII. Կազմակերպության կարիքների համար գնումների կազմակերպումն ու իրականացումը

39. Կազմակերպությունն իր կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կատարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

VIII. Վերահսկողությունը կազմակերպության գործունեության նկատմամբ

40. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման /աուդիտի/ լիազորված պետական մարմնի կողմից պատվիրակված աուդիտի կողմից:

IX.Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

41. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ:

42. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

43. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

44. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

45. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

46. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: